

Ձեր  
Չայնը,  
Ձեր  
Ուժը



Լոս Անջելեսի Քաղաքային Խորհրդի Շրջանների  
Վերաբաշխման Հարցերով Հանձնաժողով (LACCRC)

# Ինչ է հարկավոր իմանալ շրջանների վերաբաշխման մասին

Ժողովրդավարությունում մեր ձայնը մեր ուժն է: Այսպիսով, որպես Լոս Անջելես քաղաքի բնակիչներ, մենք մեր ձայնը օգտագործում ենք բազում եղանակներով՝ քվեարկելու Խորհրդի Անդամի օգտին՝ մեզ ներկայացնելու համար. զանգահարելու մեր կողմից ընտրված պաշտոնյաներին, երբ օգնության կարիք ունենք. թույլ տալու որոշումներ կայացնող անձանց իմանալ, արդյոք մենք սատարում ենք կամ դեմ ենք որևէ նոր օրենքի կամ կանոնների, որոնք ազդում են մեր կյանքի վրա: **Շրջանների վերաբաշխման գործընթացը ևս մեկ եղանակ է կիրառելու մեր ձայնը մեր իշխանությունն իրականացնելու համար: Շրջանների վերաբաշխումը նույնչափ կարևոր է ժողովրդավարության համար, որքան քվեարկությունը: Սակայն շատ մարդիկ շատ բան չգիտեն շրջանների վերաբաշխման մասին: Այս տեղեկատվական թերթիկը նախատեսված է շրջանների վերաբաշխման նպատակով**

Ձեզ կարևոր տեղեկություններ տրամադրելու համար և բացատրելու, թե ինչու է այն կարևոր Ձեզ համար:

**Ի՞նչ է շրջանների վերաբաշխումը:** Յուրաքանչյուր անձ Լոս Անջելես քաղաքում ապրում է Քաղաքային Խորհրդի շրջանում: Մենք հնարավորություն ունենք ընտրելու քաղաքային խորհրդի անդամ՝ կախված այն շրջանից, որում ապրում ենք: Օրինակ՝ Բոյլե Հայթ. Պակոյմա, Վենիս և Հարավային ԼԱ-ն գտնվում են Խորհրդի տարբեր շրջաններում և այդ համայնքների բնակիչները ձայն են տալիս անձանոթ մարդկանց՝ իրենց ներկայացնելու համար:

**Ի՞նչու է մեզ անհրաժեշտ շրջան անցնում է մի գործընթացի միջով, որը կոչվում է շրջանների փոփոխություն՝ ուղղված յուրաքանչյուր շրջանի որոշմանը:** Չուգահեռ նրան, որ համայնքները փոքրանում կամ մեծանում են և մարդիկ գալիս ու գնում են, կարևոր է, որ շրջանները սահմանված են արդարացիորեն և հավասարապես: Համաձայն ԱՄՆ սահմանադրության, շրջանների վերաբաշխման տվյալ քարտեզում բոլոր ընտրական շրջանները պետք է պարունակեն մոտավորապես նույն թվով մարդիկ: Կազմվող քարտեզները կորոշեն քաղաքական իշխանության հատկացումը և ներկայացուցչությունը կառավարության բոլոր մակարդակներում (քաղաքային, վարչաշրջանային, նահանգային և դաշնային):



### Ինչու՞ է շրջանների վերաբաշխումը կարևոր:

Շրջանների սահմանների տեղակայումը կարող է որոշել, թե ում համար կարող են քվեարկել բնակիչները, և նույնիսկ, թե որքան արձագանքող են ընտրված պաշտոնյաները Ձեր հարցումներին: Ներկայացուցչությունը իշխանություն է: Կախված նրանից, թե ով է ներկայացնում Ձեզ Քաղաքապետարանում, դա կարող է նշանակել շատ թե քիչ մատչելի բնակարաններ, ավելի մաքուր փողոցներ և ավելի լավ գրոսայգիներ: Հավաստիանալը, որ Ձեր շրջանի սահմանը գծվում է այնպես, որ Դուք արդարացի ներկայացվածություն ստանաք, կարող է մեծ փոփոխություն լինել Ձեր և Ձեր ընտանիքի համար: Շրջանների վերաբաշխման արդյունքում երբևէ չպետք է մերժվի քաղաքի կառավարմանը ձայն ունենալու Ձեր իրավունքը: Քարտեզները պետք է գծվեն այնպես, որպեսզի թույլ տան Ձեր շրջակայքին ստանալ հավասար վերաբերմունք:



## Ինչպե՞ս է աշխատում շրջանների վերաբաշխումը:

Քաղաքապետը և Քաղաքային Խորհուրդը նշանակել են անկախ քաղաքացիների հանձնաժողով՝ խորհուրդ տալու նրանց, թե ինչպես գծել նոր շրջաններ, որոնք արտահայտում են Լոս Անջելեսում այդ քաղաքը եզակի դարձնող հարյուրավոր համայնքների շահերը: **21** անդամից բաղկացած հանձնաժողովը կազմված է գանազան քաղաքացիներից՝ քաղաքի բոլոր մասերից: Հանձնաժողովը հանձնառու է ապահովելու բոլորի հավասար և արդարացի ներկայացուցչությունը Քաղաքապետարանում:

Նախքան սահմանների վերագծումը հանձնաժողովը կիրականացնի **19** հանրային լսումների և համայնքային հանդիպումների շարք: Քաղաքային Պորհրդի յուրաքանչյուր Շրջանի համար կլինի մեկ լսում և չորս տարածաշրջանային հանդիպումներ:

Երբ հանձնաժողովն ավարտի հանրային լսումները, նրանք կվերցնեն Ձեր կողմից տրամադրված տվյալները՝ Դաշնային Կառավարության կողմից տրամադրված տվյալների հետ միասին, և կգծեն նոր քարտեզներ:

Կնախագծվեն մի շարք քարտեզներ և դրանք կներկայացվեն համայնքին առցանց ու հանրային լսումների միջոցով՝ ապահովելու, որ հանձնաժողովը ստանա Ձեր արձագանքը: Այս մենք կվերանայենք քարտեզները և կուղարկենք դրանք Քաղաքային Խորհրդի հաստատմանը:

## Ինչպե՞ս կարող եմ մասնակցել՝ ապահովելու, որ իմ ձայնը լսելի լինի:

Շրջանների վերաբաշխման գործընթացում մասնակցելու շատ եղանակներ կան:

Ներկայացե՛ք շրջանների վերաբաշխման վերաբերյալ **19** լսումներից մեկին, որոնք վիրտուալ կերպով կանցկացվեն համայնքներում՝ ամբողջ Լոս Անջելես Քաղաքում՝ **2021** թվականի հուլիսի 1-ից մինչև **2021** թվականի սեպտեմբերի 25-ը:

**Ներկա գտնվելու կամ մասնակցելու համար գործնականում. Սեղմեք այստեղ կամ գնացեք [bit.ly/LACCRCZoom](https://bit.ly/LACCRCZoom)**

**Միայն լսելու համար. Չանգահարեք **1-669-254-5252**, մուտքագրեք **161 545 4787** #**

**Գրավոր մեկնաբանություններ ներկայացնելու համար . Սեղմեք այստեղ կամ գնացեք [bit.ly/lacitycoi](https://bit.ly/lacitycoi)**

Դուք նաև կարող եք ներկայացնել Ձեր վկայությունը գրավոր՝ [redistricting.lacity@lacity.org](mailto:redistricting.lacity@lacity.org) :

Հանձնաժողովի աշխատանքն է հաշվի առնել Ձեր ներդրումը՝ շրջանների քարտեզները կազմելու վերաբերյալ առաջարկներ նախապատրաստելիս:

Մեզ հարկավոր է իմանալ Ձեզանից, թե Ձեր կարծիքով ինչն է կազմում Ձեր համայնքը: Պատմե՛ք մեզ դպրոցների, եկեղեցիների, զբոսայգիների և գնումների տարածքների մասին: Պատմե՛ք մեզ մարդկանց մասին: Պատմե՛ք մեզ, թե որ շրջակայքները պետք է ներառվեն և ինչն է եզակի դարձնում Ձեր համայնքը:

## Որո՞նք են կանոնները և չափանիշները:

Քարտեզները որոշելու համար կիրառվող որոշ չափանիշները ներառում են՝

1. Խորհրդի շրջանները պետք է հավասար չափի բնակչություն ունենան:
2. Շրջանի տարբեր մասերի միջև աշխարհագրական կապ պետք է լինի:
3. Պետք է նվազագույնի հասցնեն շրջակայքի տրոհումը մի քանի շրջանների:
4. Պետք է համապատասխանեն «Բնակչության Իրավունքների մասին» Օրենքին, որն օրենք է, որի նպատակն է պաշտպանել էթնիկ բնակիչներին, ինչպիսիք են լատինախոսները, ասիացի ամերիկացիները և աֆրիկացի ամերիկացիները, որպեսզի նրանք ունենան արդար հնարավորություն՝ իրենց նախընտրած ներկայացուցչին ընտրելու համար:

Հետևե՛ք մեզ՝



LACCRC2021



@LACCRC2021

*Լոս Անջելեսի Քաղաքային Խորհրդի Շրջանների Վերաբաշխման Հարցերով Հանձնաժողովի (LACCRC) առաքելությունն է ապահովել, որ համայնքի բոլոր անդամները արդարացիորեն և հավասարապես ներկայացված լինեն Լոս Անջելեսի Քաղաքային Խորհրդում:*

*Ձեր խորհրդի շրջանի և համայնքի մասին ավելի իմանալու համար գնացե՛ք Լոս Անջելես Քաղաքի «Իմ շրջակայքի մասին տեղեկատվություն» բաժինը՝*

*[www.lacity.org/residents](http://www.lacity.org/residents) կայքում:*